436

1. Քեզնից ճառագած լույսերի ծովում
Որքա՜ն երազներ, հույզեր են ծնվում:

Օ՜, ի՜նչ անուշ սեր, օ՜, ի՜նչ քնքուշ սեր
Քոնն է հավիտյան, մեր հզոր Աստված:

2. Սերդ մեր ճամփին լույս դարձավ անմար,
Սերդ մեր ճամփին հույս դարձավ անմար:

3. Սեր, խաղաղություն և սուրբ միություն
Դու ես մեզ տվել Քո սիրով անհուն:

4. Մեծ հույս ու հավատ մեզ պարգևեցիր
Եվ Քո սուրբ սիրով սրտեր վառեցիր:

Օ՜, ի՜նչ անուշ սեր, օ՜, ի՜նչ քնքուշ սեր,
Օծի՛ր պարգևով Քո աստվածային:

5. Այդ սերը վառվեց բոլորիս սրտում,
Պայծառ բոցկլտաց բոլորիս հոգում:

Օ՜, ի՜նչ անուշ սեր, օ՜, ի՜նչ քնքուշ սեր,
Օծի՛ր Սուրբ Հոգու անմար կրակով:

6. Այդ Քո սերն էր, որ մեզ այդպես գերեց,
Սերն՝ աստվածային, անշահախնդիր:

Օ՜, ի՜նչ անուշ սեր, օ՜, ի՜նչ քնքուշ սեր,
Օծիր մեզ սիրով Քո աստվածային: